

հրդային օրինատացիան կը հիմնաւորեն երեք գլխաւոր տուեալներու վրայ. — ա) տնտեսական օժանդակութիւն, բ) հայ ժողովուրդի Ֆիզիքական պաշտպանութիւն (թրքական վրտանդը նկատի առնելով), եւ գ) Թուրքիոյ խորհրդայնացումն ու միացումը Խորհ. Ռուսաստանին:

Տնտեսական օժանդակութիւնը սերտօրէն կապուած է ներկայ Ռուսաստանի տնտեսական քաղաքականութեան հետ: Այդ մասին Դաշնակցական մամուլը լայնօրէն արտայայտուած է:

Բոլշեւիկեան Ռուսաստանը որպէս Խորհրդային Հայաստանի հողատար պետութիւն մը, անցնող եօթը տարիներուն ոչինչ ըրաւ հիմնական, ուղի կայնեցնելու փոքրիկ Հայաստանի տնտեսութիւնը: Աւելին. բոլշեւիկեան հասարակարգը ինքն իր վրայ կը շարժի եւ կը հայլի: Բոլշեւիկի գոյութեան պահպանումը պայնաւորուած է Ռուսաստանի ընդարձակ տարիաստաններով եւ ոռու ժողովուրդի գիւղական հսկայ բազմութեան ճակատագրապաշտ ինքնաբաւութեամբ: Այդ ինքնախարութիւնն է, որ միակ բաւականութիւնը կը կազմէ բոլշեւիկեան կուսակցութեան, որ իր յաջողութիւնը կապած է ժամանակի տեւողութեան եւ անհիմն սպասումներու հետ: Այս հսկայ անիւր (Ռուսաստան) թաւայումներուն հետ կապուած է Հայաստանի խեղճուկ կառքը, որու սպասումներն անիրականայի կը մընան նոյնիսկ տնտեսական կենսունակութեան եւ տարրական սպրուստի հարցերուն մէջ. որովհետեւ Ռուսաստանի տարիաստանները կը պակսին Հայաստանի համար:

Հիմնական տնտեսական օժանդակութիւն մը կարելի է ընել Հայաստանին միայն այն ժամանակ, երբ Հայաստանի միապաղաղ գիւղացիութեան կը տրուի բաւարար չափով հող, ինչ որ կարելի է գլուխ բերել Հայաստանի սահմաններու լայնացումով: Այսպիսով, տնտեսական օժանդակութիւնը (եթէ վերանքներու ունեցումը պատմութիւնները մէկ կողմ թողնենք) կը դառնայ քաղաքական օժանդակութիւն մը, որ սերտօրէն կապուած է Թուրքիոյ հետ:

Ուրեմն ի՞նչ կը մնայ բոլշեւիկեան Ռուսաստանի օրինատացիայի հիմքին մէջ:

Այն, որ գոյութիւն ունի թաւրք-թաթաբական վտանգ մը հայերու եւ Հայաստանի գլխուն, որմէ կարելի է խուսափել բոլշեւիկեան Ռուսաստանի զինակցութեամբ: (Դուք ասոր տակ հասկցէք բոլշեւիկեան բարբառով, «ազգերու ինքնորոշում», ազգամիջեան կռիւներու վերացումը, եւ ընկերվարական կարգերու իրականացումը կոմկասեան հանրապետութիւններու սահմաններու մէջ): Եւ յետոյ կայ Տաճկաստանի «յեղափոխական» վերելքը:

Ռուսաստանի հետ ըլլալը, ըստ բոլշեւիկներու, ոչ միայն կ'ապահովէ հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութիւնը եւ ազգամիջեան կրօններուն վերջ կուտայ, այլ կը նպաստէ Տաճկաստանի «յեղափոխականցման», որ հետըհետէ զարգանալով պիտի յանգի բոլշեւիկեան յեղաշրջման մը, ու Թիւրքիան, որպէս Խորհրդային հանրապետութիւն մը, պիտի մտնէ Խորհրդային Հանրապետութիւններու Միութեան մէջ: Այսպիսով Թուրքիան վտանգաւոր ըլլալէ պիտի դադրի: Միւս կողմէ, հայերը պիտի կրնան դառնալ Տաճկահայաստան, եւ «եղբայրական» հանրապետութիւնները ի վիճակի պիտի ըլլան իրագործելու ազգերու ինքնորոշման սկզբունքը:

Համաշխարհային յեղափոխութեան եւ Թուրքիոյ խորհրդայնացման ճանապարհով տապալել իմպերիալիզմը ընդհանրապէս, եւ անդլիական իմպերիալիզմը մասնաւորապէս, (ուսական փորի ցաւ) եւ ընկերվարութեան տիրապետութեան ճանապարհով լուծել հայկական հարցը, — ահա, հայ բոլշեւիկեան «մարքսիստական» քաղաքականութիւնը:

Հայկական հարց կ'ըսեմ, այն պատճառով, որ թրքական վտանգ, ազգերու ինքնորոշում, հայերու վերադարձ են. են... բոլորն ալ կապուած են հայկական հարցի լուծման հետ:

Հայ բոլշեւիկները որքան ալ բարձր պոռան, թէ հայկական հարց մը գոյութիւն չունի, կամ լուծուած է, որ իրենք Թուրքիոյ հետ եղբայրական կապերով կապուած են, չեն կարող խուսափել այդ կարեւորագոյն խնդրէն,